«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 41/02

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 19.03.2019թ. ժամը 17:30

Համաձայն 13.02.2019թ-ի ՀՀ Վարչապետի աշխատակազմից ՀՀ Արդարադատության Նախարարությանը վերահասցեյագրված և ՀՀ ԱՆ Վերահսկողական ծառայությունից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 27.02.2019թ-ին ստացված,քաղաքացի Հակոբ Ջամբազյանի դիմում-բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի՝ Սիմոն Աղազարյանի սնանկության գործով կառավարիչների՝գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Մարտի 19-ին,16-00-ին `«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Դիմումատու քաղաքացի Հակոբ Ջամբազյանը
Սնանկության գործով կառավարիչ՝Հովհաննես Եղյանը
Սնանկության գործով կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեյանը

ՄԱՍՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հենրիկ Մարտիկյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Ադամյանը
Սնանկության գործով կառավարիչ՝Հովհաննես Եղյանը
Սնանկության գործով կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեյանը

Դիմումատու քաղաքացի Հակոբ Ջամբազյանը պատշաճ ծանուցված էր բայց նիստին անհայտ պատճառնորով իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը չէր ապահովել:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ
1.13.02.2019թ-ի ՀՀ Վարչապետի աշխատակազմից ՀՀ Արդարադատության Նախարարությանը վերահասցեյագրված և ՀՀ ԱՆ Վերահսկողական ծառայությունից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 27.02.2019թ-ին ստացված,քաղաքացի Հակոբ Ջամբազյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի՝ Սիմոն Աղազարյանի սնանկության գործով կառավարիչների գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և տեղեկացրեց նիստի մասնակիցների վերաբերյալ առ այն,որ դիմումատու քաղաքացի Հակոբ Ջամբազյանը պատշաճ ծանուցված էր բայց հանձնաժողովի նիստին անհայտ պատճառնորով իր կամ իր ներկայացուցչի ներկայությունը չի ապահովել:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի անդամներին հայտնել կարծիք հանձնաժողովի նիստը առանց դիմումատու շարունակելու վերաբերյալ: «ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի ներկա անդամներից՝Ա.Ադամյանը արտահայտեց իր կարծիքը առ այն,որ եթե դիմումատուն պատշաճ ծանուցվել է հանձնաժողովի նիստի տեղի և ժամի վերաբերյալ և իր ներկայությունը չի ապահովվել,ուստի կարելի է ընդունել,որ նա իր դիմումում նշված փաստական հանգամանքներից և ներկայացված փաստաթղթերից զատ այլ բան ներկայացնելու չունի և քանի որ քննվելու է սնանկության գործով կառավարչների հարցը ու կառավարիչները ներկա են նիստի, ուստի կարելի է նիստը շարունակել դիմումատուի բացակայությամբ,կարգապահական վարույթը շարունակելով դիմումում նշված փաստական հանգամանքների և ներկայված ապացույցների շրջանակներում:

Մյուս հանձնաժողովի անդամները քննարկեցին ստեղծված իրավիճակը և ընդունեցին առաջարկը նիստը սկսել առանց դիմումատուի՝ լսելով սնանկության գործով կառավարչների բացատրությունները և հետո անդրադառնալ եզրակացության գալու հնարավորություններին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. 13.02.2019թ-ի ՀՀ Վարչապետի աշխատակազմից ՀՀ Արդարադատության Նախարարությանը վերահասցեյագրված և ՀՀ ԱՆ Վերահսկողական ծառայությունից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 27.02.2019թ-ին ստացված,քաղաքացի Հակոբ Ջամբազյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի՝ Սիմոն Աղազարյանի սնանկության գործով կառավարիչների գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչների վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթը և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության համար 2019թ-ի Մարտի 19-ին, ժամը 17:00-ին՝ հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստը սկսել դիմումատուի՝ Հակոբ Ջամբազյանի բացակայությամբ:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և ներկայացրեց դիմում-բողոքի բովանդակությունը,ներկայացրեց նաև որ սույն գործով տեղի է ունեցել սնանկության գործով կառավարչի փոփոխություն 17.08.2015թ-ին կառավարիչ՝Հովհաննես Եղյանը 2018թ-ի դեկտեմբեր ամսից դադարեցվել են կառավարչի լիազորությունները և նոր կառավարիչ է նշանակվել Ալեքսանդր Կարակեչյանը:

Իր բացատրությունները ներկայացնելու համար ձայնի իրավունք տրվեց քաղաքացի Սիմոն Աղազարյանի սնանկության գործով նախկին կառավարիչ՝Հովհաննես Եղյանին,ով ներկայացրեց իր բանավոր բացատրությունները,մասնավորապես նշեց,որ սույն սնանկության գործը ըստ էության թիվ ԵԿԴ/0030/01/13 քրեական գործով կայացված դատավճռի քաղաքացիական վարույթի շարունակությունն է,որի ընթացքում տուժողները արդեն իրար հետ մրցակցելով պարտապանի բացակայության պայմաններում.սնանկության քաղաքացիական վարույթում բազմակի անգամներ բողոքարկել են և բողոքարկում են վարույթի ընթացքում կատարված ցանկացած գործողություն և կայացված որոշումները,2018թ-ին պարտապանը ավարտելով պատժի կրումը,ազատվելով,միացել է այդ վարույթի ընթացքին իր բողոքներով և առարկություններով,«նոր երևան եկած հանգամանքների» առկայության պատճառաբանություններով:Սույն բողոքի վերաբերյալ կառավարիչը հայտնեց,որ բողոքը առաջինն չէ եղել են նաև այլ նույնաբովանդակ դիմումներ այլ մարմիններին,որոնց այդ մարմիններում իր կողմից ներկայացվել է համապատասխան բացատրություններ և ապացույցներ եղել են նաև դիմումատու պարտատիրոջ հետ բազմաթիվ հանդիպումներ,որոնց ընթացքում իր կողմից տեղեկացվել և բացատրվել է վարույթի իրավական և պահանջների

բավարարման ուղղությամբ իր կողմից կատարվող և կատարվելիք գործողությունները և դրանց նպատակահարմարությունը,բայց պարտատիրոջ կողմից իր կարծիքով պահանջի բավարարման համար անհրաժեշտ, ընտրվել է միայն դիմում բողոք գրելու ճանապարհը:

Կառավարիչը ըստ էության տարբերակեց,որ դիմում նշված փաստական հանգամանքը պարտապանին համասեփականության իրավունքով պատկանող՝ք.Երևան,Այգեստան 10-րդ փող. 19 հասցեյի անշարժ գույքի բաժնեմասի իրացման հարցն է,որը մինչ օրս չի իրացվել,որի իրացումից առաջացած միջոցների հաշվին էլ բավարարում կստանա պարտատերը:

Նշված անշարժ գույքի վերաբերյալ Կառավարիչ Հ.Եղյանը տվեց բացատրություն առ այն, որ դեռ 2015թ-ին սնանկ ճանաչված Ռուզաննա Թովմասյանի /Սիմոն Աղազարյանի կինը՝ամուսինը/ սնանկության վարույթում այդ անշարժ գույքը հանդիսացել է գրավի առարկա,ապահովվելով պարտապան Ռուզաննա Թովմասյանի վարկային պարտավորություններ կատարումն ապահովված պարտատիրոջ նկատմամբ:

Ռ.Թովմասյանի սնանկության վարույթում գույքը գույքագրվել,գնահատվել և իրականացվել է նրա իրացման հետ կապված օրենքով սահմանված ընթացակարգերը,քանի որ գրավի իրավունքը ապահովվում էր այդ վարուքով ապահովված պարտատիրջ այդ գույքի իրացումից առաջացած միջոցների առաջնահերթ և ամբողջական բավարարումը:

Քաղաքացի Ռուզաննա Թովմասյանի սնանկության վարույթում պարտապանի կողմից մարվելով ապահովված պարտատիրոջ հանդեպ ունեցած բոլոր պարտավորությունները սնանկության վարույթը ավարտվել է «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 89-րդ հոդված կարգով և նշված գույքը ազատվել է գրավի իրավունքի ծանրաբեռնվածությունից,որից հետո արդեն Սիմոն Աղազարյանի սնանկության վարույթում,որպես համատեղ ամուսնության ընթացքում ձեռք բերված գույք,պետք է գույքագրվեր՝ք.Երևան,Այգեստան 10-րդ փող. 19 հասցեյի անշարժ գույքի պարտապան ամուսնուն օրենքով սահմանված,պատկանող բաժնեմասը:Կառավարիչը հանձնաժողովին ներկայացրեց գույքագրման կազմակերպման և անցկացման 08.05.2018թ-ի ծանուցումները և 29.05.2018թ-ի գույքագրման մասին արձանագրությունը և նշեց որ դիմումատու Հակոբ Ջամբազյանը նույնպես պատշաճ ծանուցված է եղել գույքագրման անցկացման մասին,բայց գույքագրմանը ներկա չի գտնվել:Ըստ գույքագրման արդյունքների ք.Երևան,Այգեստան 10-րդ փող. 19 հասցեյում գույքագրվել է երկու անշարժ գույք՝Վկայական 2069052,տրված 07.10.2005թ-ին և Վկայական 2072317,տրված 29.09.2005թ-ին՝Ռուզաննա Թովմասյանի անունով,և այդ վկայականների տարածքում և նրանց սահմաններից դուրս տարբեր առկա ապորինի շինություններ,որոնք կառուցապատվել են հետագա տարիների ընթացքում:Կառավարիչ՝Հ.Եղյանը նշեց,որ իր կողմից գույքագրումից անմիջապես հետո ձեռք է առնվել միջոցներ գույքագրված գույքի շուկայական արժեքի գնահատման աշխատանքների կազմակերպման և անցկացման ուղղությամբ,որի ընթացքում 2018թ-ի մայիսին դիմել է «Էքսպերտ Օցենկա» մասնագիտացված ՍՊ ընկերությանը և կատարված աշխատանքներից հետո 18.07.2018թ-ին ստացել է պատասխան,ըստ որի ընկերությունը պատճառաբանելով վկայականների և իրականության հետ նրանց էական տարբերությունները չի կարողացել կատարել անշարժ գույքերի շուկայական գնահատում:Կառավարիչը 10.10.2018թ-ին դիմել է «Վարմօն Ռիելթի»մասնագիտացված ՍՊ ընկերությանը,որտեղից նույնպես գործը վերադարձրել են չկատարված:Կառավարիչը հանձնաժողովին ներկայացրեց ընկերությունների հետ գրագրությունը,ներկայացրեց նաև պարտապան Սիմոն Աղազարյանից 12.09.2018թ-ին և նրա պաշպան՝փաստաբան Կարմեն Պողոսյանից իր անվամբ 01.10.2018թ-ին ստացված գրությունները,ըստ որի փաստաբանը հայտնում էր,որ վարույթում ներգրավված որոշ պարտատերեր այդ թվում նաև Հակոբ Ջամզյանը,համաձայն 04.04.2013թ-ի թիվ 342-Ա ՀՀ կառավարության որոշման հանդիսանում են գույքային կորուստների վերականգնման ծրագրի շահառուներ և նրանցից օրինակ՝Արուսյակ Պետրոսյանը իր պահանջի իրավունքը զիջել է, իսկ նոր պահանջատերը ստացել է ամբողջական բավարարում բայց նա դեռ սնանկության վարույթում գրանցված է որպես պահանջատեր,իսկ պարտապանը խնդրում է գույքի գնահատման աշխատանքները հետաձգել քանի որ պահանջատերերի մասով առկա են պահանջների բավարարման փաստեր,որոնց վերաբերյալ ապացույցները կներկայացնի լրացուցիչ:Պարտապանի կողմից 06.11.2018թ-ին ՀՀ Վերաքննիչ քաղաքացիական դատարան է ներկայացվել նաև «Պարատերերի վերջնական ցուցակի հաստատման մասին » դատարանի

որոշումը՝ վերոգրյալ նոր երևան եկած հանգամանքների հիմով մասնակի բեկանելու բողոք,որը գտնվում է քննության ընթացքում:

Սնանկության գործով ներկա կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեչյանը հայտարարեց որ ինքը գործը նոր է ստացել և գտնվում է գործին վերաբերվող փաստաթղթերի ընդունման-հանձնման և գործի հանգամանքների ուսումնասիրության փուլում և ոչ մի գործողություն այս գործով չի կատարել:

Հանձնաժողովի անդամ՝Ա.Ադամյանը հարց ուղղեց կառավարչ՝Հ.Եղյանին առ այն,որ այս գործում ակնհայտ էր,որ առկա է անշարժ գույքի բաժնեմասի առանձնացման կամ եթե այն առանձնացնել հնարավոր չէր լինի ամբողջական գույքի իրացման խնդիրը,որը դատական պրոցես լինելով, ինքը հայցադիմում այդ հիմքով ներկայացրել է դատարանին թե ոչ:

Կառավարիչը պատասխանեց,որ հայցադիմում չի ներյակացրել,քանի որ պարտատերերի պահանջների ավելի արագ բավարարում տալու նպատակով,փորձել է գույքը գնահատել և բաժնեմասի գնման համար դիմել գնման նախապատվություն ունեցող համասեփականատիրոջը,արդեն նրա հրաժարվելուց հետո միայն կդիմեր դատարանին ամբողջ գույքի իրացման և դրամական միջոցների բաժանման խնդրանով:

Հանձնաժողովի անդամները հարցեր ուղղեցին կառավարչներին,ստացան դրանց պատասխանները,քննարկեցին պատասխանները,ներկայացված փաստաթղթերը և հանձնաժողովի նախագահ՝Տ.Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ լսելով կառավարչիներին ուսումնասիրելով ներկայացված փաստական հանգամանքները հասկանալի,որ և կառավարչի կողմից մոտ երեք տարի գույքագրում չկատարելու հանգամանքը բացատրվում է,որ գույքը համաձայն «Սնանկության մասին»ՀՀ Օրենքի 47-րդ հոդվածի չի հանդիսացել այդ վարույթի գույքային միավեր և միայն այլ սնանկության վարույթի ավարտումով է հիմք առաջացել նույն օրենքի 56-րդ հոդվածի հիմքով գույքագրել անշարժ գույքը և ձեռնամուխ լինել նրա գնահատման և իրացման գործառույթներին,որոնք էլ ունեցել են իրենց դժվարությունների,որոնց հիմքով էլ մինչ օրս գույքը գնահատված չէ և չեն կատարվում իրամանմանն ուղղված գործողություններ:

Հանձնաժողովի անդամ՝Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը,որ կառավարիչը գույքի գնահատման անհաջող փորձերից հետո պետք է կողմնորոշվեր,որ միակ ճանապարհն դատարան հայցով դիմելն է,որի ընթացքում պետք է միջնորդեր դատարանին գույքի բաժանելի լինելու և նրանց շուկայական արժեքի որոշման,փորձաքննության կատարելու վերաբերյալ:

Նման փորձաքննության արդյունքներով էլ հնարավոր կլիներ լուծել այդ հարցը և պարտատիրոջ կողմից հնարավոր էր նման դիմում-բողոք չէր լինի:

Հանձնաժողովի նախագահն համաձայնելով արտահայտած կարծիքի հետ նշեց որ համաձայն «Սնանկության գործով կառավարչի Վարքագծի կանոնագրքի» 1.8.կետի ՍԳ կառավարիչը պարտավոր է իր գործառույթները իրականացնել բարեխոհրեն և արդյունավետ:

Այս պարագայում սնանկության գործով կառավարիչ՝Հովհաննես Եղյանը իր կարծիքով իր գործառույթները կատարել է բարեխոհրեն բայց ոչ արդյունավետ,առաջարկեց «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5-րդ հոդվածի 5.1.կետի 5-րդ մասի հիմքով հայտարարել նախազգուշացում,իսկ քաղաքացի Սիմոն Աղազարյանի ներկա կառավարիչ՝Ալեքսանդր Կարակեչյանին հանձնարարել իրականացնել «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի /գ/ կետով նախատեսված լիազորությունները,դիմելով դատարան,անշարժ գույքի բաժանելիության և նրա իրացման կարգի վերաբերյալ որոշման,խնդրանքով:

Հանձնաժողովի մյուս անդամները համակարծիք եղան առաջարկներին և քվերկեցին՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. 13.02.2019թ-ի ՀՀ Վարչապետի աշխատակազմից ՀՀ Արդարադատության Նախարարությանը վերահասցեյագրված և ՀՀ ԱՆ Վերահսկողական ծառայությունից «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 27.02.2019թ-ին ստացված,քաղաքացի Հակոբ Ջամբազյանի դիմում- բողոքի հետագա ընթացքը ապահովելու նպատակով, քաղաքացի՝ Սիմոն Աղազարյանի սնանկության գործով կառավարիչների գործողությունները/անգործություն/,օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ միջնորդել «ՍԳԿԿ» ԻԿԿ Դիտորդ խորհրդին «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 հիմքով քաղաքացի Սիմոն Աղազարյանի սնանկության գործով նախկին կառավարիչ՝Հովհաննես Եղյանին հայտարարել նախազգուշացում,իսկ ներկա կառավարիչ՝ Ալեքսանդր Կարակեյանին հանձնարարել հայտնաբերված կարգապահական խախտումը վերացնելու համար 1 ամսյա ժամկետ,իրականացնել «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի /գ/ կետով նախատեսված լիազորությունները,դիմելով դատարան,անշարժ գույքի բաժանելիության և նրա իրացման կարգի վերաբերյալ որոշման,հայցադիմումով:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Հ.Մարտիկյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան